ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հոկտեմբերի 2023 թվականի № 341-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԲՋՆԻԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԱԶԱՏՄԱՆ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի № 129-Ն որոշման № 1 հավելվածի 7-րդ և 8-րդ կետերի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2018 թվականի հոկտեմբերի 22-ի № 315-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. ***Ռուզաննա Տուշիկի Հովհաննիսյանին*** 2023 թվականի հոկտեմբերի 31-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Բջնիի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի պաշտոնից:

2. ***Ռուզաննա Տուշիկի Հովհաննիսյանին*** 2023 թվականի հոկտեմբերի 31-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Բջնիի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար՝ մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մրցույթի արդյունքներով *(տնօրենի թափուր պաշտոնում)* պաշտոնի նշանակումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

2023 թվականի հոկտեմբերի 31
ք. Հրազդան